# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ-ն ՀՀ ՇՄԱ ԵԱՃԱՊՁԲ-2024/013 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 11 | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ | Պատրաստված ւ էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով է, անկյունները կլորացված են կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Ամուր են ՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով է, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Պահարանը պատրաստված է 8 մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓՏՍ-ից: Չափսերը՝ 800 x 450 x 1800 մմ ( Լ x Խ x Բ): Պահարանը բաժանված է հատևյալչափսերի(ներսի)՝ 800 x 450 x 450 մմ ( Լ x Խ x Բ) չորս դարակների, 18 մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓՏՍ-ից պատրաստված դռներով փակվող, որոնցից յուրաքանչյուրը ամրացված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | է 3-ական ծխնիով: Բոլոր դռները ունեն օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը` 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք):Բոլոր անկյունները լինեն կլորացված կամ անկյուններին ամրացված լինեն պլաստմասե կլորացված հատուկ դետալներ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) է և E0դասի ՓՏՍ-ի գույնի:Պահարանի կոնստրուկցիան հավաքված է պտուտակներով, փայտե չիվիներով և էմուլսիայով Դռները և կողային մասերը լինեն լաքապատ /տեսակը` կիսափայլատ/: Պահարանը ունի 50 x 60 x 150 մմ ( Ե x L x Բ)չորս առանձին փայտյա, կամ փոշեներկված մետաղական ոտքեր: Ոտքերի տակը հատակին հպվող հատվածի եզրերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վերջնամասերին տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Հետնապատը 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) է և E0դասի ՓՏՍ-ի գույնի: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գույնը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԿԱՐԵՆ ԳԻՆՈՍՅԱՆ ՌԱՖԻԿԻ ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/013 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 11 | | | | | |
| | | | | | |